Կ Ա Ր Ծ Ի Ք

ԿԱՐԼԵՆ ԱՐՄԵՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ «ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.03 «ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Շուկայական հարաբերություններին անցումը համակարգային երկարաժամկետ գործընթաց է, որն, ըստ էության, առնչվում է մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտների հետ և պահանջում է համակողմանի հիմնավորված սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակում և իրականացում: Չնայած այն հանգամանքին, որ անցած ժամանակահատվածում այդ ուղղությամբ Հայաստանում կատարվել են որոշակի քայլեր, այդուհանդերձ, դեռևս առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց հնարավոր արագ լուծման դեպքում միայն կարելի է ապահովել ընդհանուր տնտեսական վերափոխումների արդյունավետությունը: Այդպիսի հիմնախնդիրների շարքում առանձնահատուկ դեր ունեն փոքր և միջին ձեռնարկատիրության կազմակերպման և զարգացման հարցերը: Ակնհայտորեն, տնտեսական համակարգի այդ կարևորագույն ոլորտի գործունեության կազմակերպումը և դրա արդյունավետության բարձրացումը տնտեսական զարգացման ներկա փուլում խիստ հրատապ են ու արդիական: Դա, անշուշտ, պահանջում է տվյալ բնագավառում առկա իրավիճակի վերլուծության և համաշխարհային փորձի ուսումնասիրության արդյունքների հիման վրա գնահատել փոքր և միջին ձեռնարկատիրության դերը հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման գործում, մշակել մոտեցումներ տվյալ բնագավառի հետագա զարգացման համար և որոշել դրանում պետական աջակցության հիմնական ուղղությունները: Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում հատկապես առավել սուր են արտահայտված ֆինանսական միջոցների հասանելիության խնդիրները, որոնց բացակայությունը լուրջ խոչընդոտ է ոլորտի ձեռնարկությունների գործունեության համար: Այս տեսանկյունից, փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսավորման խնդիրների բացահայտումն ու

լուծումը կարևոր նշանակություն կարող է ունենալ ոլորտի հետագա զարգացման համար: Աշխատանքը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչը խոսում է ատենախոսության թեմայի **արդիականության և հրատապության** մասին:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, ինչը հնարավորություն է տվել ապահովել դրված խնդիրների լուծման հաջորդականությունը և պահպանել ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ սկզբունքները:

Աշխատանքի **առաջաբանում** ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները:

Ատենախոսության **առաջին գլխում** ուսումնասիրված են փոքր և միջին ձեռնարկատիրության էությունը և դրա դասակարգման չափանիշները, տվյալ ոլորտի դերը տնտեսության զարգացման գործում և փոքր ու միջին ձեռնարկությունների ֆինանսավորման հիմնախնդիրները:

Ատենախոսության **երկրորդ գլխում** քննարկված են փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի վիճակը ՀՀ-ում և զարգացման միտումները, ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդիրները և հնարավորությունները:

Ատենախոսության **երրորդ գլխում** մշակվել են փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության բարելավման հիմնական մոտեցումները և ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովման ուղղությունները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների. ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ, ինչը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիությունՀ

Աշխատանքի հիմնական **գիտական նորույթը** կայանում է նրանում, որ մշակվել են ՀՀ-ում ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության բարելավման համալիր գործիքակազմ, փոքր և միջին ձեռնարկությունների արտաքին, մասնավորապես բանկային ֆինանսավորման նորարարական գործիքների զարգացումը սահմանափակող արդի խնդիրների լուծման ուղղություններ և առաջարկվել է ՀՀ բանկային համակարգում ներդրնել ֆինանսավորման նոր պրոդուկտ, որը նախատեսում է երաշխիքային և ֆինանսավորման սահմանաչափերի նախահաստատում՝ առանց անշարժ գույքի գրավադրման:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ փոքր և միջին բիզնեսի զարգացմանն ուղղված քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում:

Ատենախոսության վերաբերյալ կան դիտողություններ, որոնցից հատկապես կցանկանայինք ընդգծել հետևյալները:

1. Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի վերլուծության արդյունքում հեղինակի կողմից լիարժեք խորությամբ չի տրվել այդ ուղղությամբ վերջին տարիներին իրականացված պետական աջակցության ազդեցության գնահատականը: Վերջինս, մեր կարծիքով, հնարավորություն կտար բացահայտել առկա բացթողումները և մշակել համապատասխան մոտեցումներ դրանց վերացման ուղղությամբ:

2. Փոքր և միջին ձեռնարկատիրության ինստիտուցիոնալ ապահովվածությունը, ակնհայտորեն, կարևոր նախադրյալ է հանդիսանում տնտեսության այդ հատվածի արդյունավետ զարգացման համար: Ընդ որում, տվյալ ոլորտն իր վրա է կրում նաև երկրում ձևավորված ընդհանուր գործարար միջավայրի ազդեցությունը: Կարծում ենք, որ հեղինակն իր կողմից իրականացված

վերլուծությունների ընթացքում պետք է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հետ կապված հիմնախնդիրների լուծումը դիտարկեր նաև գործարար միջավայրի բարելավման համատքստում:

3. Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների կողմից վարկային միջոցների ձեռքբերման առումով էական խոչընդոտ է հանդիսանում առևտրային վարկերի բարձր տոկոսադրույքը, ինչի մասին իրավացիորեն նշում է հեղինակն աշխատանքում: Բարձր գնահատելով դրա բացասական ազդեցության չեզոքացման ուղղությամբ ատենախոսությունում ներկայացված մոտեցումները, միաժամանակ, կարծում ենք, որ անհրաժեշտ էր առավել խորությամբ անդրադառնալ վարկային տոկոսադրույքների նվազեցման հնարավորությունների ուսումնասիրությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները հետապնդում են հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության բարելավմանը նվիրված հետագա ուսումնասիրությունների ուղղությունների բացահայտման նպատակ:

Կ. Մարգարյանի թեկնածուական ատենախոսությունն ունի գիտագործնական կարևոր նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար հրատապ ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսական հասանելիության բարձրացման ծրագրերի մշակման և իրականացման ժամանակ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Կ. Մարգարյանի «Փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսավորման հասանելիության բարելավման խնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը. 00.03- «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍ«
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
22.04.2020թ.

Պարոն Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
պ. գ. թ.
ԵՊՀ գիտական քարտուղար

Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

22.04.2020թ.